



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ՀԱՅ Վ. ԱՐԺՐՈՒՆԵՔ


ԲԺՇԿԻ ԶՐՈՅՑՆԵՐ № 6

ԻՆՖԼՈՒԵՆՑԱ

ԿԵՐ

ՆՈՐ ՑԱՐ

Տիկն է 3 հ.



ԻՆՖԼՈՒԵՆՑՆԵՐ ՑՈՒՊԻԿՆԵՐ

Թ Ե Ֆ Լ Ի Ս

Տպարան Տ. Առաքելակովի

1902

22 FEB 2013

610
31-441

ԲԺԿ. Վ. ԱՐԾՐՈՒՆԻ

616.921
4-88
04 AUG 2010

ԲԺՇԿԻ ԶԳՈՅՑՑԱՆԵՐ Խ 6

A circular red ink stamp. The outer ring contains the text "СОВЕТСКАЯ СОЦИАЛИСТИЧЕСКАЯ РЕПУБЛИКА ГРУЗИЯ" (Soviet Socialist Republic of Georgia) in Georgian script. The center of the stamp contains the date "7/III 1922". Below the date, there is additional text in Georgian script.

ተኞችሮተሩኤነዕ

$$\frac{1003}{10.013}$$



ՆՈՐ ՑԱՐ

Թ Ի Ֆ Լ Ի Ա
Տուարան Տ. Ռուսինեանցի
1902

0.06.94.1.B6019.41564

માર્ગ કાનુંજ

Доз. цензурою, Тифлисъ, 17 Апрѣля 1902 г.

፩፻፭፻

—*всіх* *заслуг* *і* *нагород* *їх* *за* *це* *заслуги* *і* *з*
—*всіх* *заслуг* *і* *нагород* *їх* *за* *це* *заслуги* *і* *з*

ԻՆՖՈՐԵՆՑԱ ԿԱՍ ՆՈՐ ՅԱԻՆ

Տաններկու տարի սրանից առաջ, 1899-ի
ձմեռը, մի սովորակի հարիսք (համաճարակ հիւանդանութիւն) քամու նման անցաւ ամբողջ հողագոյնի վրայով ու հիւանդացրեց մարդկութեան մի երրորդականը, ալիքներն 500 միլիոն մարդ:

Բժիշկներն ապշել-մնացել էին, թէ այս ինչ
տեսակ ցաւ էր: Մի տեղ նա թռոքերն էր հարուա-
ծում, միւս տեղ ներվէրը, մի ուրիշ տեղ լոկ ջերմի-
նման էր, շատ երկրներում էլ ստամոքսի հիւան-
դութեան կերպարանք էր ընդունում և ալին: Քա-
ռասուն երեք տարուայ բժիշկները միախն տեսել
էին այս հիւանդութիւնը 1847—48 թուականնե-
րին:

Քառասուն երեք տարի քննած էր մնացել այդ
ցաւի թունը, և առնկարծ նորից բանկել էր սպաս-
վելի ոգովը:

Ճողովուրդը սրան ։ «ԱՌՈ ՅԱՒԻ» անունը տուեց,
կարծելով, թէ նոր է աշխարհ ընկել. բայց այդ
սիսակ է։ Գեռ. 1510 թուականին նա լաւանի էր, և
ամեն զարու մէջ նա մէքանի անգամ քնկարձ
բանկվում է մի անգ ու արագ ապահածվում:

Եւ, ձշմարխս որ, ոչ մի հիւանդութիւնն այն-
չափ արագ չէ տարածվում, ինչպէս ինֆլուէնցիան:
Յանկարծ, անսպասելի կերպով, շատ կարծ ժամա-
նակում, նա վիճակին ահազին ամոզերի ստուերոց
ծածկում է ամբողջ երկիրներ, թուչում է ծովի
վրայով և միքանի օրուաց մէջ կարող է ափուել
երկրագնդի մի խոշոր մասի վրա:


Եւ սարսափելի է նրա ապրած զոհերի թիւը.
1889-ի խթումէնցան աւելի մարդ կոտորեց, քան
1892-ի խոլերան, —միայն Ֆրանսիան 42 հազար
մարդ կորցրեց!

Վ. ԱՐԵՐՈՒՄ

1. ԽՆԳԼՈՒԿԵԱՅՑԱ ԿԱՄ ՆՈՐ ՅԱԻ

Ինքը լուսացան մի վարակիչ հիանդութիւնն է, այսինքն. նա հիանդից անցնում է առողջին, և այսպէս արագութեամբ տարածվում է ու գառնում է համաճարակ:

Եթէ նա՝ վարակիչ է, ուրեմն նրա պատճառը մի որևէ վարակիչ թոյն է: Եւ, յիշաւի, մի գիտնական զննեց մանրացոյցով ^{*)}) հիւանդների խուրխի ու հարբուխի արտաթուրութիւնները և նրանց մէջ զտաւ զարմանքի մանը էակներ, օրոնք ցուպիկների նման են և որոնք կոչվում են ինֆլուէնցայի ցուպիկներ:



ԵՆԳԻՂԻՆԱՑՈՒՅԹ ՅՈՒՂԻԿԱՐՏ

*) Տես իմ՝ «Վարակիչ» հիւանդանթիւնները և
նրանց թուները»: 1902 թ., Թիֆլիս:

Այս զարմանալի մանը էակնեցն են ին-
ֆլուէնցա յարուցանողները: Սրանը են, որ
մտնելով առօդ մարդու մարմի մէջ հի-
շանդացնում են նրան:

Եյտէս ուրեմն, ինֆլուէնցան այնպիսի
վարակիչ գօրութիւն ունի, լիչպէս քու-
թէշը, դիֆթերիտը, խոթերան, կարմրուկը
և ուրիշները:

Մրանց սլէս նա կարող է տեղափոխուել
զանազան իրեղինների, անզբանքների միջով
մի երկրից-միւսը, նա ճանապարհորդում է
երկաթուղիներով ու նաւերով, մանում է
ամեն տուն, աղքատի խրճից սկսած մինչև
թաղաւորների պալատները, և հարթածում
է ամենքին: — Նորածին երեխայից սկսած
մինչև ծերերը: Ինֆլուէնցայի ցուպիկը, թո-
քախտի ցուպիկի նման, կարող է չորանալ,
խառնուել վոշու ու հողի հետ և քամու հետ
տարուել-սփոռուել հեռու տեղեր: Այս կեր-
ալով նա մտնում է մարդուս քիթն ու թոքերը,
այնտեղ կենդանանում, բազմանում ու վա-
րակում *): Երբոր այդ ցաւն ընկնում է մի
քաղաք կամ դիւդ, բնակիչների կէսը հի-

շանդանում են: Տարուայ ժամանակը, եղա-
նակը, տեղի դիբը (լեռներ թէ դաշտեր),
օդի տաքութիւնը կամ սառնութիւնը ոչինչ
նշանակութիւն չունեն, — ինֆլուէնցան ամեն
տեղ և ամեն եղանակի կարող է տարածուել:
Երբ մի տեղ թոյնն արդէն ընկել է, ոկրպ-
րում հատ-հատ, կենդ-կենդ են հիւանդա-
նում, բայց շուտով վարակումն սաստ-
կանում է, հիւանդների թիւը շատանում է
ու այսպէս տեսում է միքանի շաբաթ: Այ-
նունեաւ հիւանդութիւնը վնալով նուազում
է, թուլանում ու վերջանում:

Ընդհանրապէս մի տեղում ինֆլուէն-
ցայի համաճարակը տեսում է մինչև 8 շա-
բաթ:

Մի անգամ հիւանդացողը նոյն համա-
ճարակի միջոցին այլևս չի տկարանում,
բայց հետեւալ տարին կարող է դարձեալ
վարակուել:

2. ԻՆՖԼՈՒԷՆՑԱԻ ՆՁԱՆՆԵՐԸ

Հիւանդութիւնը յանկարծակի, անսպա-
սելի կերպով է վրա տալիս:

Վարակուածը յանկարծ սարսուռ է
զգում ողնաշարի վրա, երբեմն զլխացաւ ու

*). Տես նոյնպէս իմ Թոքախտ կամ բարտ-
կացաւ. 1902 Թիֆլիս:

հարբուխ, երբեմն էլ թեթև ցաւեր յօդերի
(ծնկների, ուսերի, արմունկների) մէջ և
միշտ մի տեսակ ընդհանուր թուլութիւն։
Ամբողջ մարմինը չարդվում է, մէջքը, ոտերն
երբեմն սաստիկ ցաւում են, սիրու սկսում
է արագ բարախել, չնշառութիւնը ծան-
րանում է։

Եթէ այդ միջոցին տաքութիւնը շա-
փենք, կրտեսնէք, որ հիւանդն արդէն բա-
ւական զերմ ունի *): Մի երկու ժամից յե-
տոյ զերմը բարձրանալով հասնում է 39—
40°-ի։ Այս բարձր տաքութիւնը սակայն
երկար չի տեսում և հինգ միւս օրը, կամ
մի-երկու օրից յետոյ իշնում է։

Եթէ հիւանդը մէկ կամ երկու-երեք օր
առողջ է, այսինքն, այլևս զերմ չունի, և
յանկարծ նորից տաքութիւն է վրա տալիս,
պիտի զգոյշ լինէք ու բժշկի դիմէք, որով-
հետև այդ նշանակում է, թէ հիւանդութիւնը
բարգուել է, այսինքն մի նոր ցաւ, օրինակ-
թոքերի բորբոքումն է առաջացել։

Ինֆլուէնցայի արտայայտութիւնները
այնքան բազմատեսակ ու բարդ են, որ եր-

*) Տաքութիւնը չափում են առանձին գոր-
ծիքով, որը կոչվում է «ջերմաչափ»։

կու հիւանդ չէք զտնի, որոնց հիւանդու-
թիւնը իրար նման լինէին։ Կարելի է վրա-
տահ ասել, որ մարմնի ոչ մի մասը ազատ
չի մնում։ Ուզեղը, մկանները, մարտղական
գործարանը (ստամոքս և աղիքներ), սիրու,
թոքը—մի կառուկ. մեր մարմնի բոլոր մա-
սերը կարող են հիւանդանալ ու վնասուել։

Երբեմն այս բոլոր ցաւերը միևնոյն հի-
ւանդի վրա են երևում, բայց առհասարակ
նրանցից մէկը, կամ մի երկուսն են յայտնը-
վում, օրինակ. մէկի ուղեղն է հիւանդա-
նում, միւսի թոքերը, մի երրորդի ստա-
մոքսը, կամ թոքերն ու ստամոքսը միասին
և այն։

Նկարագրենք մի առ մի նշանները.

1. Յաւերը, ինչպէս ասել ենք, շատ
յաճախ, համարեա միշտ պատահում են։
Դվագաւը երբեմն այնքան սաստիկ է լի-
նում, որ հիւանդին ուղղակի խելազարու-
թեան է հասցնում, — հիւանդն անտանելի
չարգումն ու ճնշումն է զգում գլխի մէջ,
կարծես գանգը տրաքուելու է։ Յաւը ընդ-
հանրապէս աւելի սաստիկ է լինում ճակա-
տում, աչքերի բներում, կարծես աչքերը
«դուրս են պրծնում», նա տարածվում է
մէջքին, յօդերին, ոսկըներին և բոլոր մկան-

ներին, — ցաւում են ազգքերը, ցաւում են կուրծքը, կողերը: Եւ այս բոլոր տանջանքները սաստկանում են գիշերները և թոյլ չեն տալիս հիւանդին հանդիսու առնելու:

2. Ամենից առաջ երեան են զալիս հարբուխ և բգացաւ, յիառ հազը պար պնկնում է կուրծքը և առաջ է զալիս շնչափողերի գրդուում, իսկ երբեմն էլ թոքերի առօրոքումն:

Այս ամենավտանգաւոր բարդումն է: Նա վըա է հասնում, երբ հիւանդն արգէն առողջացել է: Յանկարծ, հիւանդութիւնից մի երկու-երեք օր անց, հիւանդը նորից դողցնում է ու սաստիկ տաքութեան մէջ ընկնում: Կարծես ինֆլուէնցան նորոգուեց: Բայց շուտով, հինց նոյն օրը, կողքի ծակոցը, հազը, շնչառութեան ծանրանալը, արնախառն խորխը (կամ առանց պրեան) ցոյց են տալիս, որ թոքերը բռնուած են: Թոքբորփում են ընդհանրապէս թոքերից մէկի մի մասը, երբեմն ամբողջ մի թոքը, շատ հազիւ երկումն էլ: Ինֆլուէնցայի գոհներից մեծագոյն մասը այս բարդումից են մեռնում:

Թոքերի բորբոքում կարող է ամենին պատահել, բայց սարսափելին այն է, որ

աւելի հիւանդանում են ծերերը, թողերը, թոքախտառները մի ոքսէ ծանր հիւանդութիւնից նոր առողջացածները: Ենթերի համար ինֆլուէնցային թոքաբորբոքում մեծ ժամամբ մահացու է:

3. Ա թ բ տ ը սաստիկ թուլանում է և, եթէ նա արդէն հիւանդ է, հասկանալի է, որ չի զիմանայ ու կը դադարի բարախելուց:

4. Մ ա ր ս ո դ ա կ ա ն գ ո ր ծ ա ր ա ն ն ե ր ը: Անախորժութիւն, սըտախառնութիւն, վախումն, լեզուի վառակալումն, — այս բոլոցը շատ յաճախ պատահում է ինֆլուէնցայի միջացին, — այդ ցայց է տակիս, որ ստամոքսն ու աղիիները զբգուած են:

5. Հիւանդանում են նոյնպէս և պիճիկները (երիկամունք), պատահում է արենամզութիւն (հիւանդի մեզը կարմիր-արենախառն է լինում):

6. Կաշու վրա դուրս են տալիս զանազան ցանեթ (դաւրս տուածներ), պատահում է նոյնպէս և կարմիր քամի մարմի գանազան տեղերում:

7. Պատահում են և աշքերի ու ականջների ցաւեր (մանաւանդ երեխաների մէջ):

3. Ի՞նչպէս զէօթ է ՊԱՀՏՊԱՆՈՒԵԼ ԻՆ-
ՖԼՈՒԷՆՑԱՅԻՑ

Եյս հիւանդութեան դէմ ինքնապաշտ-
պանութիւնը չափագանց դժուար քան է:
Ինչպէս կարմրուկը, սա էլ զարմանալի արա-
գութեամբ և ոյժով տարածվում է ամեն-
տեղ:

Սակայն կան միքանի միջոցներ, ո-
րոնք պիտի գործ ածենք, եթէ ուզում ենք
առողջ մնալ, կամ եթէ հիւանդանալու էլ
ենք, գոնէ թեթև կերպով հիւանդանանք:

Ամենից առաջ պէտք է պաշտպանուել
մըսելուց: Դրա համար լաւ է դիշեները
ցուրտ եղանակին իսկի տնից դուրս չը
գնալ, իսկ տաք եղանակին չքրտնել ու
քրտնելիս իսկոյն սպիտակեղինը փոխել:
Եթէ հնար կայ, պէտք է հիւանդին առան-
ձին սենեակի մէջ պահել և կտրել լարաբե-
րութիւնը նրա հետ: Յամենայն դէպս, քանի
որ վարակիչ թոյնը խորխի մէջն է, պէտք
է հիւանդին թքել տալ մի բաժակի մէջ և
ոչ թէ գետնին: Բացի այդ, նրա սպիտակե-
ղինը, թաշկինակները պէտք է լաւ եփ տալ
չըի մէջ առանձին:

Ինկատի ունենալով, որ այդ հիւան-

ՊՈՒԹԻՒՆԸ աւելի է վնասում ծերերին, թոյլե-
սին, թոքախտատուներին, հիւանդուներին,
սմհրաժեշտ է որ, եթէ տան մէջ այդպիսի-
ներ կան, նրանց հեռացնեն հիւանդի մօ-
տից, առանձնացնեն մի սենեակ և ոչ ոքի
թոյլ չտան ներս մտնելու, բացի այն
անձից, որը հիւանդի մօտ պիտի մնայ:

Առհասարակ տառնձին խնամքով պիտի
պահպանել ծերերին և թոյլերին: Եթեոք
գիւղի կամ քաղաքի մէջ յայտնվում են ին-
ֆլուէնցայի դէպքեր, սրանց պիտի լաւ կե-
րակրել, կազմուրել, հանգիստ պահել: Իսկ
եթէ այնուամենայնիւ հիւանդանան նըանք,
անպատճառ պէտք է բժիշկ կանչել:

4. Ի՞նչպէս ԽՆԱՄԵԼ ՀԻՒԱՆԳԱՅԻՆ

Ողքան էլ թեթև երևայ ձեզ հիւանդի
դրութիւնը (օր. տաքութիւնը քիչ է, հի-
ւանդը թըան վատ չի զգում), այնուամե-
նայնիւ պառկեցրէք անկողին, սենեակը տա-
քացրէք և այնպէս խնամեցրէք ձեզ հիւան-
դին, ինչպէս եթէ նա ծանը հիւանդ լինէր:
Ընտրեցէք ամենալաւ սենեակը:

Սենեակի օդը պէտք է միշտ մաքուր
պահէք, անկողին սպիտակեղինը շուտ-շուտ

փոխէք, որ միշտ մաքուր լինի, խմեցրէք
կաթ և, եթէ տաքոթին ունի, սառը
խմելիք, օրինակ, լիմոնով շաբաթ, մէջը
սառուց դցած։

Պէտք է աշխատել, որ հիւանդը քրտնի-
քրտինքը զարմանալի կերպով թեթևացնում
է ցաւերն ու մի առանձին հանդիսաւ է բե-
րում ամրող մարմին։ Քրտնեցնել հարկա-
ւոր է տաք խմելիք օր. թէյ, մորից (մալի-
նայից) եփուկ խմեցնելով ու տաք ծածկե-
լով *): Խոկ վերմակի տակ տաքացրած ա-
գուռներ, տաքացրած ջուր շշերով ևայն։

Քրտնած ժամանակ պէտք է զոներն
ու լուսամուտները ծածկել և, երբ հիւանդը
լաւ քրտնած կը լինի, թէ շապիկը և թէ
դոշակի ու վերմակի շաբաները փոխել։
Քրտինքը յաճախ կրկնվում է միքանի ան-
գամ և հիւանդը բոլորովին առողջանում է։

Դլացաւի գէմ լաւ է քաթանը թթչել
սառը ջրի մէջ (նոյն խոկ պարկով սառուց
դնել զլլիխն), սակայն եթէ հիւանդին սառը

*). Երկու հացի զգալ մոր գցէք թեւամանիր
մէջ, լորեք վրան 2 բաժակ եռման ջուր և թողէք
մնալ ։ Ժամ, իւսու խմեցրէք հիւանդին։

դուք չի գալիս, վերցրէք, որովհետեւ ցաւերը
կարող են սաստկանալ։

Եթէ տաքութիւնն իջել է, այդ դեռ չի
նշանակում թէ հիւանդն առողջ է և կարող
է իր գործին գնալ. Ընդհակառակ դժուար
բարդումները հինգ յետոյ են երեսում, ինչ-
պէս ասել ենք վերև. Ուրեմն ջերմը անցնե-
լուց յետոյ հիւանդին միքանի օր էլ պիտի
սենեակի մէջ պահել, մինչև որ վտանգը բո-
լորովին անցնի։

Խոկ եթէ, չնայելով այս զգուշութիւններին, զարձեալ հիւանդութիւնը բարգուեց,
օրինակ. երկնեցաւ հազ, թոքերի բորբո-
քում և այլն, պէտք է խսկոյն բժշկի դիմել։

Եթէ հիւանդը շատ նուազ է կամ ծեր
է, չի կարելի նրան շատ ծածկել-քրտնաց-
նել, որովհետեւ շատ տաքութեան մէջ
սիրտը կարող է թուլանալ. Այդպիսի-
ներին պիտի հով պահել, և եթէ սիրտը
նեղանում է, սառը խմելիք տալ (օր. լի-
մոնով շաբաթ, լիմոնադ, կամ սառցա-
ջուր): Եերերին, իրեւ դեղ, քիչքիչ արադ
կամ կոնեակ տուէք, այն էլ ջրով։ Օրինակ.
մի թէյի գդալ արագ կամ կոնեակ զցէք մի
բաժակ թէյի մէջ և կում-կում խմեցրէք։

Ինֆլուէնցայի դէմ շատ դեղեր կան,

բայց գեղերը առանց բժշկի չի կարելի
տալ. Մի ճար միայն կայ, որ շատ ծա-
նօթ է բոլորին և շատ զործածական է
մեր երկրում—դա խինան է։ Նրանից կա-
րելի է տալ. երիտասարդներին ու առողջնե-
րին 5—6 գրան օրական երկու անգամ,
իսկ երեխաններին ու ծերերին 2—3 գրան,
նոյնպէս 2 անգամ։



ՀՀ Ազգային գրադարան



NL0273880

ՀԵՂԻՆԱԿԻ ՄԻՒԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1) Ժանոտախտ (միքանի օրինակ միտքն)	20 Կ.
2) Խոլերայի մասին (սպառուած):	
3) Խոլերա	5 "
4) Հիպնոտիսմ հատ. I. (միքանի օրինակ միտքն)	20 "
5) Հիպնոտիսմ հատ. II.	15 "
6) Դոգրոցական առողջապահութիւն (սպառ-կերազարդ)	50 "
7) Առողջ երեխաների խնամատարութիւն.	25 "
8) Սիֆիլիս, Կակուղ շանկը, Առևտնակ	25 "
9) Թշուառների բարեկամ բժիշկ Հասղ	20 "
10) Ամուսնութիւն, առողջապահական էտիւդ	75 "

ԲԺՇԿԻ ԶԲՈՅՑՑՆԵՐ՝

№ 1. Մի՛ ԽՄԻ՛, Երկրորդ տպագր.	5 Կ.
№ 2. ՎԱՏ ՑԱՒ	6 "
№ 3. ՎԱՐԱԿԻՉ ՀԵՖԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ- ՆԲԱՆՑ ԹՈՅՆԲ.	15 "
№ 4. ԹՈՅԱԼԻՏ ԿԱՄ ԲԱՐԱԿԱՑԱՒ	10 "
№ 5. ԴՈԴԵՐՈՅՔ ԿԱՄ ՄԱԼԱՐԻԱ	5 "
№ 6. ԷՆՖԼՈՒԵՆՑԱ ԿԱՄ ՆՈՐ ՑԱՒ	8 "
(Բոլորն էլ նկարներով):	

Ծախվում են ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ու ԳՈՒՅՏԵՆԲԵՐԴ
դրավաճառանոցներում և հեղինակի մօտ (Կոռուց,
Ճ-րյ Վ. Ա. Արցրոն).